

## ԵՐԱԶԵԱԼ ՈՍԿԵԴԱՐ

### III

Միջին դարերի աղանդները.—Վերածնութեան շրջան.—Թօմաս  
Մոռ և Նրա ուտօպիան.—

Միջին դարերում լոյս չի տեսել ոչ մի շարադրութիւն,  
որ յատկապէս նուիրուած լինէր անցեալ կամ ապագայ ոսկե-  
դարի նկարագրութեան. բայց սխալ լինէր ասել, որ ոսկեդա-  
րի գաղափարը իսպառ մոռացուած էր: Նա միան երևան էր  
դալիս միջին դարերու յատուկ կրօնական երևոյթների ու  
շարժումների մէջ, որոնց թուին են պատկանում խաչակրաց  
արշաւանքները և բազմաթիւ աղանդները և հերետիկոսական  
վարդապետութիւնները: Յայտնի է, որ վերշիններս գլխաւորա-  
պէս յաջողութիւն էին գտնում անտեսապէս և բարոյապէս  
ճնշուած գիւղացի և մանր արհեստաւոր տարրերի մէջ, խոս-  
տանալով նրանց ոչ միան երկնալին երանութիւն, այլ և  
երկրիս վերաց եղարարութիւն և տնտեսական հաւասարութիւն,  
մի խօսքով ոսկեդարեան երշանկութիւն: «Առաքելական եղ-  
րալընները» (պաթառենները) նպատակ էին զրել բարեփոխել  
մարդկապին կեանքը ռամկավարական սկզբունքների հիման վե-  
րայ և XIV-րդ դարում այդ ուղղութեամբ մի անյաջող փորձ  
էլ արին (Դոլչինոյի հոչակաւոր ապատամբութիւնը և նրա ե-  
ղերական մահը 1307 թ.): Բէգգարդների աղանդը պահան-  
չում էր թէ ստացուածքի և թէ կանանց հանրութիւն: Նրանք  
կատարեալ հաւասարութիւն էին քարոզում և դէմ էին ամեն  
տեսակ իշխանութեան: Միջին դարերի վերշին մենք տեսնում  
ենք, որ գիւղացիները—որոնց տնտեսական և իրաւական դր-  
բութիւնը այդ միջոցին շատ աւելի վատացել էր—ամէն տեղ  
ապատամբում են կրօնական դրօշակի տակ, բայց իրապէս իրոնց

տնտեսական վիճակը և իրաւական դրութիւնը բարւոքելու նպատակով (Լոլլարդները—Անգլիայում, բարօրիշները—Բօհէ-միայում, վերջապէս նշանաւոր գիւղական ապստամբութիւնը Գերմանիայում):

Եկեղեցական վերանորոգութեան (Ռեֆօրմացիալի) շրջանում տեղի ունեցած եան Մատիսէնի, Թօմաս Միւնցէրի և Խօսն Լէզդէնցու ապստամբութիւնները պէտք է բացատրել ոչ միայն նրա կրօնական Փանատիկոսութեամբ, այլ և այն հաւատով, որը տարածուած էր ժողովրդի մէջ, և որով տոգորուած էին և նրանք՝ թէ ոչնչացնելով հին անտեսական և հասարակական կարգերը, կարելի է ստեղծել նոր, երջանիկ կեանք: Հետաքրքրականը այն է, որ զրանց բոլորի իդէալը—կոմմունիզմն էր, մասնաւոր կամ կատարեալ, և այդ իդէալն էր, որ նրանք ուզում էին իրականացած տեսնել կեանքի մէջ: Սակայն, ինչպէս յայտնի է, այդ բոլոր փորձերը հէնց սկզբում խեղուեցին իշխանների, ազնուականների և բորձրաստիճան հոգևորականների ձեռքով, որոնց շարքութիւն էր կուտերը:

Կրօնական էնդուզիաստների ու նրա ջանքերով կազմուած համայնքների անլաշողութիւնը այնուամենայնիւ չմեռցրեց ժողովրդի մէջ երազեալ ուսկէդարի, Պղատօնի իդէալական պետութեան կամ առաջին քրիստոնեանների փայփայած երկնալին թաղաւորութեան գաղափարը: Վերաճնութեան շրջանը, իր նոր գիւտերով ու նոր հորիզոններով ընդհակառակը նոր սրանունդ էր տալիս մարդկալին երեակալութեան, իսկ նոր բացուած աշխարհների նկարագրութիւնները համոզում էին նրանց, որ երջանիկ աշխարհ աստծո—երազ կամ հէքիաթ չէ, որ իրօք հեռու, անլայտ ու մինչեւ օրս անծանօթ երկիրներում գոյութիւն ունի դրախտային կեանք, առաստ, անհոգ և երջանիկ:

Ճանապարհորդները հազար ու մի գոյններով նկարագրում էին իրանց արկածները, տեսած հրաշալի կղղիները, նորագիւտ Ամերիկան, նրա բնիկների կաղմակերպութիւնը, կեանքը և այն և խոր կերպով ազդում էին ընթերցողների երեակալութեան վերար: Համոզմունք էր ստեղծուել, որ նորագիւտ երկիրների ժողովուրդների կաղմակերպութիւնը աւելի կատարեալ է և

քնդունակ երշանկացնելու նաև եւրոպացիներին, եթէ Եւրոպացումն էլ նոյն կարգերը մացուեն։ Ահա այդ ժամանակ երեւան է դալիս մի շարադրութիւն, որը ըստ երևոյթին պատմում է աղջակիսի նորազիւտ կղզու և նրա բնակչութեան կաղմակերպութիւն, տնտեսական դրութեան, ընտանեկան յարարերութիւնների մասին և այլն, մինչեւ իսկապէս հեղինակը նկարագրում է երևակայական կղզի ու բնակչութիւն, իդէալական պետութիւն ու կաղմակերպութիւն։

Դա Թովմաս Մօռի ուտոպիան էր \*), որը լոյս տեսաւ 1516 թուականին Թ. Մօռը ծնուած էր 1478 թ. Լօնդոնում և ժամանակի կրթուած մարդկանցից մէկն էր։ Նա տաղանդաւոր փաստաբան էր և զանազան հարուստ վաճառականական տների տաւատարմատար։ 26 տարեկան հասակում նա արդէն ընտրւում է պարլամէնտի անդամ և իր ընդունակութիւնների շնորհիւ հրաւիրուեց պետական-արքունական պաշտօնավարութեան, ուր կարճ միջոցում հասաւ ամենաբարձր աստիճանների և պատասխանատու պաշտօնների։ 1599 թուին նա լորդ կանցլիքի պաշտօնը ստացաւ։ Դա այն ժամանակն էր, երբ Հենրիկոս VIII-ը որոշեց անշատուել Հռովմի եկեղեցուց։ Թ. Մօռը ընդդիմադրում էր թագաւորի քմահանութեանը, մասնաւորապէս նրա ամուսնական արկածներին և երբ 1631 թուին անդդիմական հոգևորականութիւնը Հենրիկոսին եկեղեցու զլուխ և պետ հռչակեց—Թովմաս Մօռը հրաժարուեց պաշտօնից։ Մօռի շիտակութիւնը, յոմառութիւնը և օպպօղիցիան թագաւորին դուք չէր դալիս։ Նա հակառակորդներ չէր կարող մարսել։ Եւ ահա հնարեւում է կեղառամբաստանութիւն, տեղի է ունենում դատաստանական կատակերգութիւն և թագաւորի հրամանով Մօռը զիմանակ է 1535 թուին։ Իր հռչակաւոր շարադրութիւնը Մօռը դրել է

\*) Գրքի վերնագիրն էր՝ De optimo Reipublical statu, deque nova insula utopia libellus vere aureus (Ոսկէ գիրք կատարեալ պետութեան կաղմակերպութեան և Ուտոպիա նոր կղզու մասին)։ Ուտոպիա բառը յունարէն օս (ոչ) և տօպո (տեղ) բառերից է և պէտք է նշանակէ «ոչ մի տեղ» «անտեղ», «գոյութիւն չունեցող»։

Հօյանդիալում, ուր եկել էր նա առևտրական դաշնագիր կապելու լահճնաժողովի հետ: Թէ ախտեղ և թէ Անգղիայում Մօռը մշտական լարաբերութիւնների մէջ էր ճանապարհորդների, հեռաւոր երկիրների հետ առևտուր անողների և հումանիստների հետ, որոնց աղջեցութիւնը չի կարելի չնկատել նրա ալդ շարադրութեան մէջ: Նրա Ուասպիան մեծ ընդունելութիւն գտաւ ընթերցող հասարակութեան մէջ և ոչ մի այն Անգղիայում, այլ և ամբողջ Եւրոպայում: Հստ երևոյթին թ: Մօռը բաւարարութիւն էր տարիս ժամանակի պահանջին: Ահա ալդ դրբի բովանդակութիւնը:

Մօռը պատմում է, թէ ինչպէս նա Ֆլանդրիալի Անտվերպէն քաղաքում պատահում է իր ընկերոջ Պետրոս Գելիսին, որը զբանում էր Ռաֆայէլ Հիտորէլ ճանապարհորդի հետ: Վերջինս Ամերիգո Վէսփուչչի ընկերներից է եղել և նրանից բաժանուելով Բրազիլիայի ափերին այցելել է շատ նոր տեղեր, ի միջի ալլոց Ուտոպիա կղզին և Հնդկաստանի վրայով վերադարձել է տուն: Մօռը իր ընկերոջը և Հիտորէլին հրաւիրում է իր մօտ հիւր և ախտեղ, ճաշի սեղանին, նրանք սկսում են զրոյց անել նախ անդիմական օրէնսդրութեան մասին: Հիտորէլը Անգղիայի դաժան օրէնքները և մահուան պատիժը գողերի և աւազակների համար—աննպատակ է դանում: Հարկաւոր է, ժողովուրդը այնպիսի պայմանների մէջ դնել, որ նա ստիպուած չլինի գողանալու: Մինչդեռ Անգղիայի այժմեան օրէնքները պաշտպանում են տիրող տնտեսական դրութիւնը, որը հարստացնում է հարուստներին և զօրեղներին և ընդհակառակը սնանկացնում է թոյլերին և ստիպում են նրանց գողութիւն տնել \*): Նրան հականառում են և նա ողեւորուած սկսում է քննադատել Եւրոպական բոլոր կարգ ու սարքերը, թէ տնտեսական և թէ իրաւական ու այն համոզմունքն է լայտնում, որ Պղատօնը իրաւացի է եղել, երբ ա-

\* ) Այստեղ ի միջի այլոց այն կարծիքն է յայտնում, որ պառակներին և աշխատելու անընդունակներին պետութիւնը պէտք է թոշակ նշանակէ. մի միտք, որը իրագործուեց Անգղիայում միայն նորերս:

աելէ թէ փրկութեան և երջանկութեան միակ ճանապարհը անտեսական հաւասարութեան մէջ է»։ Տիրող անարդարութինը վերացնելու միակ մանապարհը—մասնաւոր սեփականութեան ոշնչացումն է»։ ասում է նա։ Այդ բանի դէմ բողոքում է Մոռը, որովհետև այդպիսի կարգերը ընդհանուր ծուլութիւն առաջ կրերեն, չի լինի ոչ մի յառաջադիմութիւն և այլն։

— «Քո այդ կարծիքներդ ինձ չեն զարմացնում, ասում է է չիսլոդէլը, որովհետև դու չես եղել Ուտօպիա կղզու վերայ, ուր ես անցկացրի հինդ տարի։ Եթէ դու ծանօթանաս նրա կարգերի, օրէնքների և բարքերի հետ, դու կհամածայնես, որ այնտեղի հասարակութիւնը ամենալաւ կերպով է կազմակերպուած»։

Այդ խօսքերից յետոյ նա սկսում է նկարագրել Ուտօպիայ կազմակերպութիւնը։

Ուտօպիան-կղզի է, որի վրայ 55 միատեսակ քաղաք կայ՝ Ամարօտ մայրաքաղաքով։ Ամեն քաղաք իր շուրջը փռուած մշակելու հողեր ունի. դիւղական աշխատանքներով պարապողները ապրում են քաղաքից դուրս մեծ ընտանիքներով, ոչ պակաս քան 40 կին և տղամարդուց բաղկացած։ Երկու տարի դիւղում ապրելուց յետոյ այդ ընտանիքի կէսը տեղափոխուում է քաղաք, իսկ քաղաքից գալիս են նոյն թուով նորերը, որոնք պարտական են երկու տարի դիւղացիութիւն անել ու այնպէս ամեն տարի գիւղերի և քաղաքների միշև աշխատողների փոխարինութիւն է լինում։ Այսպէս ուրեմն բոլոր ուտօպիացիները և գիւղացիներ են և քաղաքացիներ։ Գիւղի արտադրութիւնը տեղացիներին բաւականութիւն տալուց յետոյ ուղարկուում է քաղաք, որտեղից գիւղը ստանում է այն բոլորը, ինչ որ հարկաւոր է կեանքի համար։ Ամեն մարդ բացի հողագործութիւնով պարապելուց պարտական է նաև զբաղուել մի որ և է արհեստով։ Ամենքն էլ պլարտական են աշխատել. այդ բանի վրայ հսկողներ կան։ Բայց աշխատանքը շատ չափաւոր է և օրական վեց ժամից աւել չէ։ Ամբողջ կղզու արդիւնաբերութիւնը—թէ գործարանների, թէ գիւղա-

տնտեսական և իր արհեստաւորների—ենթարկուած է որոշ տնօրինութեան:

Ուստօպիայում փող գոյութիւն չունի. ամեն մարդ ստանում է իր թաղի շուկայից ինչ որ իրեն հարկաւոր է. և ընդհակաւակր ամեն մարդ իր աշխատանքի արդիւնքը—ապրանքը—տանում է այդ շուկան և գարսում է հասարակական շտեմարաններում և պահեստներում: Ոչ ոք պէտքից աւելի չի վերցնում, որովհետեւ աղանութիւն ասած բանդ նրանք չգիտեն. իսկ չգիտեն, որովհետեւ ոչ կարող են աւելորդ ապրանքով առեւտուր անել, ոչ էլ պէտք եղած ժամանակը պահասութիւն զգալ:

Կերած խմածները բոլորինը համայնական է և կաղմակերպուած է այս ժեռով: Ամեն մի փողոցի վրայ շինուած է մի մի ընդարձակ պալատ ուր որոշ ժամին բնակիչները հաւաքւում են սեղանի շուրջը: Կերակուր պատրաստողները—կանայք են. սպասաւորները—երիտասարդներ: Սեղանատան կարգերը—վաճակտն սեղանատուն են լիշեցնում: Քաղաքի, ընտանիքի, բնտանիքի անդամների թիւը ստիճանափակ է և ենթարկուած է որոշ սիստեմի:

Ընտանիքի մէջ 10—16 չափահաս անդամից աւել լինելու չէ. աւելին տեղաւորւում է ուրիշ ընտանիքներում: Քաղաքը իր գիւղերով 6000 ընտանիքից աւել ունենալու չէ. աւելիներից նոր գաղութներ են կազմում: Աղջիկները 18. տարեկանից առաջ, իսկ տղամարդիկ 22—իրաւունք չունեն ամուսնանալ. միտկնութիւնը պահուում է սրբութեամբ. ամուսնական անհաւատարմութիւնը պատճեում է՝ առաջին անգամ—գերի են դարձնուում, երկրորդ անգամ—մահուան սպատիկ ենթարկում: Ապահարզանը շատ դժուար է: Ամեն մի ընտանիքի մէջ փոքրները ենթարկուում են մեծերի իշխանութեան, կանայք—ամուսինների, երեխանները—ծնողների:

30 ընտանիք ընտրում են իրանց միշից մի պետ՝ ֆիլարխ անունով, որը առանձնապէս հսկում է իր անդամների աշխատանքների վրայ և առհասարակ տնտեսական յարաբերութիւնների: Ամեն մի 300 ընտանիք իրանց տասը ֆիլարխնե-

դուի ենթարկում են մի պղոտօֆիլարխի: Բոլոր ֆիլարխները միասին հաւաքուելով ընտրում են ժողովրդի առաջարկած թեկնածուներից մի իշխան կամ քաղաքապետ: Իշխանը պրոտօֆիլարխների հետ երեք օրը մի անգամ նիստ է կազմում և դրայլում է վարչական գործերով: Բոլոր քաղաքները ուղարկում են մայրաքաղաք երեքական ամենախելացի ծերունիներ, որոնք զիսաւորապէս զբաղուած են ժողովրդի տնտեսական կեանքը կարգաւորելով, բնակչութեան և արդիւնաբերութեան վերաբերեալ վիճակադրական տեղեկութիւններ հաւաքելով և սոյդ մասին կարգադրութիւններ անելով:

Խոշոր պաշտօնեաները ընտրում են մի տարի ժամանակով, բացի իշխաններից և քաղաքապէտներից, որոնք ընտրում են ցմահ:

Հաւատը մասնաւոր գործ է ճանաչւում և կղզու վերայ զանազան կրօններ կան. բայց անհաւատները ոչ մի ժարկ չունեն: Քահանաները ընտրուում են և մեծ պատիւ են վայելում: Կանայք էլ կարող են քահանայ ընտրուել: Գիտութիւնը ազատ է. ով ինչ գիտութիւնով որ ուգում է պարապում է. բայց տէրութիւնը հսկում է, որ անընդունակները գիտութիւնով չզրացուեն, որովհետեւ դիտնականները շատ յարդի են և ֆիզիքական աշխատանքից ազատուած են: Ուտօպիացիները պատերազմի դէմ են, բայց երբ իրենց վրայ յարձակուում են—պարտականութիւն են համարում ամբողջ ընտանիքով գնալ պատերազմի դաշտը:

Վերջացնելով իր նկարագրութիւնը, Հիտլօդէլը եղրափակում է՝ «միայն ուտօպիայում ամենքը աշխատում են ընդհանուրի օգտին, որովհետեւ այնտեղ ոչ փող կայ, ոչ մասնաւոր սեփականութիւն և ուր ամեն ոք հաւատացած է, որ նա ինքն էլ, իր ընտանիքն էլ, կստանան հասարակուկան պահեստներից այն բոլորը, ինչ որ իրանց հարկաւոր է: Այնտեղ տիրում է կատարեալ հաւասարութիւն և թէպէտեւ սեփականութիւն չկայ, բայց ամենքն էլ հարուստ են: Ամենքն էլ ապրում են ուրախ և անհոգ, որովհետեւ վաղուայ մասին հարկաւոր չէ

մտածել։ Այնտեղ թոյլի և աշխատելու անընդունակի մասին նշյանափ հոգս են քաշում, որչափ և ուրիշների մասին։

Իսկ ձեզ մօտ ուրիշութիւնը, երբ ծրիակեր հարուստները և աղնուականները փարթամ և ճռիս կեանք են վարում, իսկ խեղճ արհեստաւորները, բանուորները, դիւղացիները և այլ աշխատաւոր տարրը տաւարից աւելի բանելով, տաւարից վատ է ապրում... դա արդարութիւն չէ դա հարուստների գաւադրութիւն է։ Եւ ինչ զարմանք որ ձեզ մօտ անպակաս են գողութիւնը, աւաղակութիւնը, վիրաւորանքները, սպանութիւնները և այլն։ Եւ այս բոլորը ազքատութեան հետ միասին կ'ոչնչանար, եթէ վերացուեն անհատական սեփականութիւնը և փողը։

«Թէպէտև, վերջացնում է իր գիրքը Թօռը, ես համաձայն չեմ չիտոդէի յայտնած կարծիքների հետ, բայց կարծում եմ, որ մենք ուտօպիացիներից կարող էինք շատ փոխառնում։»

Ինչպէս տեսնում է ընթերցողը հեղինակն այս շորագրութիւնով տալիս է մեղ իդէպական կազմակերպութեան պատկերը, որը գուցէ իր շատ կողմերով չի կարող գոհացնել արդի մարդկութեան պահանջները, բայց այնուամենայնիւ ներկայացնում է մի կատարեալ հասարակական կազմակերպութիւն։ որի անդամները յամենայն դէպս ԽVI դարու եւրոպացիներից աւելի երջանիկ պէտք է լինէին։ Իսկ այդ իդէպական պետութեան կազմակերպութեան հիմքը—այժմս էլ շատերի իդէպակ է խօսքս սօցիալ-դէմօկրատաների մասին է, որոնց ապագայ պետութիւնը, ըստ Կարլ Մարկսի, հիմնուած պիտի լինի արնեսական յարագերութիւնների կանոնաւոր տնօրինութեան և հանրակեցութեան վերայ առանց մասնաւոր սեփականութեան։

Մեր արած ընդհանուր պատմական տեսութիւնից ընթերցողը տեսնում է, որ դա նոր միաք չէր և որ մինչև իսկ իրագործւում էր կեանքում, թէպէտ և ոչ լիովին և կանոնաւոր ձևով։ Բայց առաջին անգամ այդ բոլորը ձևակերպեց ու իրագործելի երազ դարձրեց—Թովմաս Մօռը իր Ուտօպիացով այդ պատճառով ուտօպիան էլ հասարակ անուն դարձաւ և

այժմ նշանակում է այն բոլոր աշխատութիւնները (կամ գաղափարները, ծեակերպութիւնները), որոնք իդէալական բնաւորութիւն ունեն և կեանքի մէջ իրագործուելու ոչ մի և կտմշատ քիչ շանսեր ունեն, յամենայն դէպս մօտ ապագայ ում։

Թ. Մօռի ուտոպիան հետևողներ առաջացրեց, որոնց երկար շարքը մինչև մեր օրերն է հասնում։ Մենք կխօսենք նրանց մասին էլ, բայց առանձնապէս կանգ կառնենք միայն այն դրուածքների վերայ, որոնք նշանակութիւն ունեն կամ քաղաքակրթութեանը պատմութեան տեսակէտից և կտմ մեծ ժողովրդականութիւն են վայելել ընթերցող շրջանների մէջ։